# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 61-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1;4-րդ կետերով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

*ՀԱՎԵԼՎԱԾ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*
*2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<20>>-Ի*
*N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ*

*ՕՐԱԿԱՐԳ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ*

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐ ԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ//

3. ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

4. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

5. ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

8. «ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ» ԲԲԸ-Ի ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 62-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեն եկամուտների մասով՝ 91273,5հազար (իննսունմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ծախսերի մասվ 91273,5հազար (իննսունմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,դեֆիցիտը / պակասուրդ/ 0.0 հազար դրամ:
2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3.Հաստատել բյուջեի ծախսերը ըստ ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4.Հաստատել բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել բյուջեի միջոցների տարեվերջի հավելորդը կամ դեֆիցիտը /պակասուրդ/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել բյուջեի դեֆիցիտի /պակասուրդ/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ,ԱՂԱՎՆԱՏՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մաթևոսյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ Ա-303-2019 գրության՝ կից ներկայացվում է ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**

# Հիմնավորում
# Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծի

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը:

Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

*եկամուտների գծով՝ **91,273,500.0** դրամ,*

*ծախսերի գծով՝ **91.273,500.0** դրամ,*

## 1. Եկամուտների կանխատեսում.

Համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել ***91,273,500.0*** դրամի չափով՝ 2019 թվականի բյուջեով հաստատված **85,222,400.0** դրամի դիմաց:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 25,890,0 հազ. դրամ՝, 2019 թվականի նախատեսվածից 2,200,0 հազ. դրամով ավելի:

2020 թվականին սեփական մուտքերը նախատեսվում է եկամուտների ընդհանուր ծավալի 28.4%-ը:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը առավել հստակ կերևա դրանք առանձին եկամտատեսակների տեսքովներկայացման պարագայում: Մասնավորապես.

**1.1) Հարկեր և տուրքեր.**

Հարկային եկամուտները ծրագրվել են 22440.0 հազ. դրամի չափով 2019 թվականի համար հաստատված ցուցանիշի 17640.0 հազ. դրամի դիմաց կամ 21.4%-ով ավելի:

-գույքահարկը նախագծով նախատեսվել է 12500.0 հազ. դրամ կամ 2019 թվականի համար հաստատված ցուցանիշից 4800.0 հազ. դրամով ավելի,

- հողի հարկը ծրագրվել է 9500.0 հազ. դրամ՝ 2019 թվականին ծրագրված ցուցանիշի չափով:

Տեղական տուրքերի գծով 2020 թվականին ծրագրվել են 440.0 հազ. դրամի մուտքեր կամ նախորդ տարիների ցուցանիշի չափով:

**1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.**

ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 2020 թվականի ՝ նախագծով ծրագրվել են 65383.5 հազ. դրամի չափով ՝ 2019 թվականի 61532.4 հազ. դրամ պաշտոնական դրամաշնորհի դիմաց:

**1.3) Այլ եկամուտներ.**

Այլ եկամուտները 2020 թվականի նախագծով ծրագրվել են 3450.0 հազ.դրամ, (ներառյալ տեղական վճարները)՝ 2019 թվականի բյուջեով նախատեսվածի չափով:

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 1990.0 հազ. դրամ՝ 2019 թվականին նախատեսվածի չափով:

## 2. Ծախսերի կանխատեսում.

Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 91273.5 հազ. դրամի չափով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար
կշիռը կազմում է 6.8%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 6.0%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 1.5%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 4763.5 հազ. դրամի չափով:

**1) Կառավարման մարմնի պահպանում** ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները:

Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 47175.0 հազ. դրամ: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 36000.0 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 2-ի N 59-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա:

Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2020 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2019 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Այսպիսով, Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

*1. եկամուտների գծով՝ 91273.5 հազ. դրամ,*

*2. ծախսերի գծով՝ 91273.5 հազ. դրամ:*

*Աղավնատուն համայնքի ղեկավար՝* *Գ.Մաթևոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 63-Ա

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-ՐԴ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 1լոտ- 04-006-0066-0069 ծածկագրով 0.0274 հա գյուղատնտեսական արտադրական նշանակության հողատեսքը աճուրդային կարգով օտարել:
2. Հողամասի վաճառքի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-չափով՝ 1 քառ.մետրը 528 ՀՀ դրամ:
3.Նախավճարը մեկնարկային գնի 5%-ը:
4.Մասնակցության վճար սահմանել 3000 ՀՀ դրամ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 64-Ա

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից 500.0 հազար (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ծախսելու համայնքի մինչև չորս տարեկան (2016-2018թթ ծնվածներ) և նախակրթարան հաճախող երեխաների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու նպատակով (համաձայն ցուցակների):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2019թ դեկտեմբերի 20
գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 65-Ա

### ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի երիտասարդական ծրագրեր հոդվածից 600.0 հազար (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ծախսելու «Ամանորյա» միջոցառումներ կազմակերպելու նպատակով (Ճաշկերույթ, հրավառություն):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 66-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան համայնքի սեփականության 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 67-Ա

## «ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ» ԲԲԸ-Ի ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Աղավնատան գյուղապետարանի և «Շինանյութեր» ԲԲԸ-ի միջև 2004 թվականի մայիսի 19-ին կնքված պայմանագրի 20-րդ կետի դրույթը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Վարձակալական պայմանագիրը միակողմանի, վաղաժամ լուծել
1) Վարձակալի կողմից հողամասը նպատակային և ընդհանրապես չօգտագործելու.
2) Վարձակալը երեք ամիս ավել վարձավճարի գումարները ժամկետի խախտումներով վճարելու, իսկ 2019 թվականի համար ընդհանրապես վարավճարի մուծում չկատարելու պատճառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 68-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությունը, թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից սոցիալապես անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն 370.0 հազար (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:
2.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն նորածինների մայրերին՝ 375.0 հազար (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ համաձայն հավելված 2-ի:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն մահացածների հարազատներին 175.0 հազար (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 3-ի:
4.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն 80.0 հազար (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ հայկական բանակ ծառայության մեկնող զինծառայողների ծնողներին իրենց զավակներին տեսակցելու նպատակով, համաձայն հավելված 4-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**2019թ դեկտեմբերի 20**
**գ.Աղավնատուն**

Հավելված1
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի N 61-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Անտոնյան Նարինե | 30000 |
| 2 | Հակոբյան Համլետ | 50000 |
| 3 | Սարգսյան Մարիետա | 40000 |
| 4 | Գրիգորյան Սամվել | 30000 |
| 5 | Սեդրակյան Գենեֆեյա | 30000 |
| 6 | Փանոսյան Ժուրիա | 30000 |
| 7 | Աբգարյան Կարինե | 30000 |
| 8 | Հովսեփյան Հռոմսիմ | 40000 |
| 9 | Մկրտչյան Եղիսաբեթ | 30000 |
| 10 | Ենոքյան Սոնյա | 30000 |
| 11 | Գալստյան Արևհատ | 30000 |
| | Ընդամենը | 370000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Ձոիրաբյան

Հավելված2
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի N 61-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Գրիգորյան Մարինե | 25000 |
| 2 | Հովհաննիսյան Եսթեր | 25000 |
| 3 | Բաղդասարյան Արմինե | 25000 |
| 4 | Աբրահամյան Վարդուհի | 25000 |
| 5 | Կյուրեղյան Մանուշակ | 25000 |
| 6 | Սմբատյան Նունե | 25000 |
| 7 | Ավագյան Ալվարդ | 25000 |
| 8 | Աֆրիկյան Նվարդ | 25000 |
| 9 | Ավագյան Հեղուշ | 25000 |
| 10 | Հակոբյան Անի | 25000 |
| 11 | Հովհաննիսյան Տաթևիկ | 25000 |
| 12 | Վահանյան կարինե | 25000 |
| 13 | Գրիգորյան Ծաղիկ | 25000 |
| 14 | Ավագյան Լիլիթ | 25000 |
| 15 | Ռաֆայելյան Ռուզաննա | 25000 |
| | Ընդամենը | 375000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Ջոհրաբյան

Հավելված 3
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի N 61-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿ

| ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Ալեքսանյան Գայանե | 25000 |
| 2 | Հարությունյան Այսեր | 25000 |
| 3 | Բաբայան Վահան | 25000 |
| 4 | Հովսեփյան Արտաշես | 25000 |
| 5 | Նիկողոսյան Սուրեն | 25000 |
| 6 | Գրիգորյան Գոհար | 25000 |
| 7 | Տիգրանյան Թոռնիկ | 25000 |
| | Ընդամենը | 175000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Զոհրաբյան

Հավելված 4
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 11 արտահերթ նիստի N 61-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿ

| ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Վարդանյան Արթուր | 10000 |
| 2 | Ոսկանյան Շավարշ | 10000 |
| 3 | Վարդանյան Հակոբ | 10000 |
| 4 | Բաբայան Արամ | 10000 |
| 5 | Աբրահամյան Արայիկ | 10000 |
| 6 | Եղիազարյան Սուսաննա | 10000 |
| 7 | Սահակյան Գնել | 10000 |
| 8 | Մակարյան Արմեն | 10000 |
| | Ընդամենը | 80000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Զոհրաբյան